

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-8/:

1-ին կարգի մասնագետ՝

- 1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով,
- 2) ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,
- 3) աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի հանձնարարությամբ, օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր և վճարներ վճարողների հաշվառումը և համապատասխան վճարների գանձումը,
- 4) աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձման աշխատանքները,
- 5) իրականացնում է հարկատուների սպասարկումը (հարկեր տուրքեր և այլ պարտադիր վճար վճարողների իրազեկում, հաշվարկների, հաշվետվությունների, տեղեկանքների ընդունում, օրենքով սահմանված դեպքերում հաշվարկում),
- 6) իրականացնում է համայնքում տեղական հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճար վճարողների հաշվառում՝ համապատասխան ծրագրերով (ֆիզիկական անձանց հողի հարկի և գույքահարկի համայնքային կառավարման տեղեկատվական ավտոմատացված համակարգ),

1-ին կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

1-ին կարգի մասնագետը՝

- 1) ունի առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի փորձի,
- 2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, "Համայնքային ծառայության մասին", "Տեղական ինքնակառավարման մասին", "Գույքահարկի մասին", "Հողի հարկի մասին", "Տեղական տուրքերի և վճարների մասին", Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

- 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2020 թվականի մարտի 26-ին ժամը 12.00-ին, Փարաքարի համայնքապետարանի շենքում: Դիմող ՀՀ քաղաքացիները Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. գրավոր դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով,

2. առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի պատճենը

3. արական անձիք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

4. հայտարարությունները լրացվում են տեղում

5. մեկ լուսանկար / 3x4 չափսի/,

6. անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Ներկայացված փաստաթղթերը, պատճենները հետ չեն վերադարձվում:

Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել, ինչպես նաև ծանոթանալ պաշտոնի անձնագրին և հարցաշարին՝ նշված որևէ հասցեով, ամեն օր, ժամը 10.00-ից մինչև 15.00-ն, բացի շաբաթ, կիրակի օրերից.

1. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքարի համայնքապետարան, համայնքապետարանի աշխատակազմ, գ.Փարաքար, Նաիրի փ.42՝ /հեռ.0231 60042/

և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն՝

ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ./0237/2-07-70, /0237/2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր 09:00-18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2020թ. մարտի 11-ը: